

Ա. Գ. ՄԱՆՈՅԱՆ

ԼՊՈՎԻ հայերեն ձեռագրերն ուսումնասիրելիս ներսես Ակինյանի ուշադրությունը գրավեց Սիմեոն Լեհացու ծավալուն ուղեգրությունը, որին նվիրված ուսումնասիրությամբ և հրատարակումով նա հանդես եկավ 1932—1935 թթ. «Հանդես Ամսօրեայի» էջերում, այնուհետև, 1936-ին, անհրաժեշտ հավելումներով ու վերանայումով լույս ընծայեց «Սիմեոն դպրի Լեհացույ Ուղեգրություն, Տարեգրություն և Յիշատակարանը» գիրքը, որ «Ազգային մատենադարանի» ՃԽԱ հատորն է: Այս հրատարակութեամբ առաջին անգամ հայագիտական գրականության մեջ էր մուծվում մի կարևոր մատենագրական հուշարձան: Հեղինակը՝ Սիմեոն դպիր Լեհացին կամ Զամոսցացին, ըստ էության նույնպես հայտնություն էր, որ ներկայանում էր իբրև բեղմնավոր մատենագիր, իբրև բավական լայնախոհ, զարգացած, հայրենասեր մտածող, ու, թերևս ամենակարևորը՝ իբրև գրական ձիրքով և դիտողականությամբ օժտված ուղեգիր: Այնուհետև 1965 և 1984 թթ. լույս տեսան Մարգո Դարբինյանի աուսերեն և Հակոբ Օրմանճյանի (հատվածական) բուլղարերեն թարգմանությունները, հավաստելով երկի կարևորությունը նաև ոչ հայ շրջանակներում:

Սիմեոնի երկի հրատարակության ներածական ուսումնասիրության մեջ հրատարակիչը հանգամանորեն շարադրում է մատենագրի կենսագրությունը, մեծապես օգտվելով, անշուշտ, Ուղեգրության ընձեռած տեղեկություններից: Ն. Ակինյանը հանրագումարի է բերում դրանք և բնութագրում նրա մատենագրական ժառանգությունը, որի պսակը «Ուղեգրությունն» է: Բայց հայ գրականության այս տեսակին պատկանող երկերի շարքում ևս առանձնանում է Սիմեոնի երկը, որ պարունակում է նրա 1608—1618 թթ. ճանապարհորդության տպավորությունները, խոհերն ու մտորումները, նաև երբեմն՝ զգացումները: Բնականաբար ասելիքի առկայությունն է պայմանավորել նրա գրքի ծավալը, իսկ արժեքը կանխորոշել է հաղորդվող առատ նյութը: Հաջողությանն իր նպաստն է բերել նաև մատուցման եղանակը, պատմելու աշխույժ ոճը:

Սիմեոն Լեհացին ծնվել է 1584 թ. Լեհաստանի Զամոսցա քաղաքում: Ծանապարհորդելու կիրքը և հակումը նրա մեջ ժառանգական էր. հայրը եղել էր Երուսաղեմում, և Սիմեոնը մանուկ հասակից լսել էր նրա՝ մահտեսի Մարտիրոսի պատմությունները սուրբ Երկիր կատարած ուղեգնացության մասին: Այդ զմայլանքը չէր կարող որոշակի դեր չխաղալ պատանու հետագա կյանքում: Բայց Ուղեգրության մեջ մատենագիրն ինքը հեռավոր ճանապարհորդության մեկնելու, Երուսաղեմ այցելելու իր ուխտը բացատրում է միայն ընթերցած գրքերի ազդեցությամբ: «Եւ երբեմն,— գրում է նա,— ընթերցեալ իմ զՎարս հարանց և զՊատմութիւնս վիպասանաց, անկաւ ի սիրտ իմ փափագ և ջերմ սէր... շրջագայիլ ի տարաշխարհիկ լինել յօտար և յանձանօթ քաւառսն և ի սփռուս հեթանոսաց: Այլ եւ ուխտիւ գնալ նստի յաստուածակոխ

քաղաքն սուրբ Ծրուսաղէմ՝ յերկրպագութիւն լուսաբուխ սուրբ գերեզմանին՝ Քրիստոսի և այլոց սուրբ տնօրինականացն որ անդ: Եւ անտի գնալ ի Մուշ, ուր նշխարքն է սրբոյն Յովհաննու Մկրտչի, և ապա ի մեծն Հռոմ, ի սուրբ գերեզմանն Պետրոսի եւ Պողոսի»¹: Ինչէ: Ավետյաց երկրի վերաբերյալ բանավոր և գրավոր պատմութիւնների տպավորութեամբ խանդավառ՝ պատանի գրագետը կանխագծել է իր անցնելիք ուղին, որ պարտադրաբար ներառնելու էր Հռոմը՝ Պետրոս և Պողոս՝ առաքյալների գերեզմաններով, Մշո ս. Կաբապետի վանքը, և ի վերջո, իհարկե, Ծրուսաղէմը: Քսանչորս տարեկան էր Սիմեոնը, երբ հնարավորութիւն ստացավ իրականացնելու նվիրական երազանքը և 1608 թ. փետրվարի 15-ին ճանապարհ ընկավ:

Բավական երկարատև այդ ուղևորութիւնը ոչ միայն բավարարութիւն է բերել երիտասարդ մտավորականին, այլև արդյունել է հայ մատենագրութեան արժեքավոր հուշարձաններից մեկը, որի հեղինակն ավելի է, քան պարզ հայեցողական կամ անտարբեր արձանագրողը: Այստեղ պակաս դեր չի խաղացել ևս մի հանգամանք. նա, ինչպես ինքն է խոստովանում, ցանկացել է ստեղծել մի տեսակ ուղեցույց իր նման երազողների, իրեն հաջորդող ուսուսավորների համար, ունենալով բավականաչափ հստակ ծրագիր, հետաքրքրասիրութեան իր սեփական շրջանակը, որին բավարարութիւն տալու համար մշտապես և ամենուր հարցուփորձ է արել տեղացի, իրազեկ մարդկանց, հավաքել ամենաբազմազան տեղեկութիւններ:

Իր գրական աշխատանքը Սիմեոնը սիրով է կատարել, կատարել է անձանձիր և անձնուրաց տքնանքով. երբեմն նավի մեջ, «երբեմն ի վերայ գրաստի, երբեմն իջևանս և խաներն նստեալ գրէի. այլք ուտէին, ըմպէին և այլ յիրս զարճանային,— նկատում է ուղեգիրը,— և ես հոգ տարեալ այսմ իրի ջանայի՝ ի լրումն հանել զառաջարկեալ գիրս, զի յօգուտ և շահաւետ լիցի ուխտաւորաց և շրջող անձանց» (175): Եվ եթե ժամանակավորապես որևէ տեղ ընդհատվում էր ճանապարհորդութիւնը, և Սիմեոնն ստիպված էր համենալ կամ հապաղել, բնականաբար ընդհատվում էր նաև Ուղեգրութիւնը. նա ստիպված էր ճանապարհածախս հայթայթելու համար ձեռագրեր ընդօրինակելու պատվերներ ստանձնել, սպասելով ճանապարհը շարունակելու պատեհութեան. «... սպասէի Աստուծոյ իմոյ ակն ունելով մխիթարութեան, մինչև այց արասցէ ինձ Տէր և հասուցէ զիս փափազանացս» (43): Հավանական է, որ այդ դադարների ընթացքում ազատ ժամանակ գտնելով՝ նա անդրադառնար նաև իր նոթերին, մշակեր: Իսկ ընդհանրապես վերջնական խմբագրումը պետք է կատարեր ուղևորութեան ավարտից հետո: Այս տեսակետից կարևոր փաստ է հետևյալը. Քիլիս քաղաքում, որ պատկանել է Իտալիային, «առանց հողոյ բոյսք և տունկք և այգիք լինին»,— ասում է Լեհացին, հարելով՝ «որպէս եւ յԾրուսաղէմ» (49), իսկ Ծրուսաղէմ նա հասել է ըստ էութեան ճանապարհորդութեան վերջում, մինչդեռ Քիլիսը սկզբներին էր:

Ճանապարհորդութեան ընթացքում ծագած հարցերի շրջանակում թերևս ամենից ավելի հստակ ու ակնբեր է նրա ուշադիր, հետևողական վերաբերմունքը այցելած վայրերի հայութեան նկատմամբ. հայ համայնքի կյանքի, պատմութեան ու մշակութի, եկեղեցու ամենաբազմազան խնդիրներ են զննողեցնում նրան: Նկատելով, որ «ամենայն տեղ հայ կայ» (8), Սիմեոնն աշխատում է նախ պարզել՝ քա՞նի տուն հայ կա, հայկական դպրոց կամ եկեղեցի գործո՞ւմ է, քահանա կա՞, հայերն այդտեղ բնիկ են, թե եկվոր, եկ-

¹ Սիմեոն դպրի Լեհացոյ Ուղեգրութիւն, Տարեգրութիւն եւ Յիշատակաբանք, Աշխատասիրութեամբ Ռ. Ն. Ակիմեանի, Վիեննա, 1906: Այսուհետև սույն գրքի հղումները՝ շարադրանքի մեջ, փակագծերով (էջ 2):

վորները երբ են հիմնավորվել տվյալ բնակավայրում և ինչ դրդապատճառներով, այսօրվա եզրույթով՝ ժողովրդագրական ինչ փոփոխություններ են տեղի ունեցել անցումային կամ ճակատագրական պահերին (ասենք՝ ջալալիների արշավանքի հետևանքով), տեղացի հայերը մայրենի՞ լեզվով են խոսում և այլն, և այլն: Միմեոնն ամենից առաջ հայ հեղինակ է, քրիստոնյա, լուսավորչական դավանության հետևորդ: Սիրով, գորովանքով, տագնապով ու ցավով է խոսում նա իր հայրենակիցների մասին: Շատ բնութագրական են այդ կարգի գրառումները: «Ը ուր և ինչ տեղ զնացաք, նա հայ գտանէաք, զի տարածեալ և սփռեալ էին ընդ երեսս երկրի որպէս զփոշի» (41): Հաճույքով է արձանագրում ուղեգիրը, թե հայերը, ո՞ր երկրում ևս ապրեն, իրենց ազնիվ նկարագրով, խելքով ու գործարար կարողություններով շահում են տեղացիների համակրանքը: Այդ ժողովուրդները նույնպիսի վերաբերմունք են դրսևորում նաև ճանապարհորդ հայերի նկատմամբ: Եթե տեղացիք ընդհանրապես հյուրասեր են, ապա «հայուն առաւել պատիւ կ'առնեն և ի գլուխ տեղ նստեցուցանեն» (143): Հոռմի պապը մեծարում է ամեն տեսակ հյուրերի, «և հայն ի վեր նստի. և [պպան] ամէնին անուն տայ զառաքելոց, բայց հային՝ Պետրոս» (142), կամ՝ «Աստուած զիրեանց [Ֆռանկաց] հոգին լուսաւորէ, որ զմեզ աւելի կու հոգան քան թէ մեք» (142):

Յուրաքանչյուր վայրի ծանոթանալիս կարևորագույն տեղեկությունները հայկական գաղթավայրի մասին են. ասացինք, որ դա փաստորեն աշխատանքի առաջին փուլն էր: Որքան էլ մոտավոր՝ այդ տվյալներն այսօր շատ կարևոր են գաղթավայրերի պատմության համար, իսկ հայերի թվաքանակի վերաբերյալ նշումները օգտագործելի են համապատասխան հաշվումներ կատարելիս:

Լեհուցին առանձին սիրով է նկարագրում ճարտարապետական կոթողները և, հասկանալի է, առավել ջերմեռանդություն է ցուցաբերում, երբ խոսքը վերաբերում է քրիստոնեական հուշարձան-սրբավայրերին: Սա կարելի է համարել նրա երկրորդ հետաքրքրությունը: Այցելելով նշանավոր եկեղեցիներ ու ճարտարապետական հուշարձաններ, եկեղեցու հայրերի, սրբերի հետ կապված վայրերը՝ հիշում է կամ ակնարկում քրիստոնեական բազմաթիվ ավանդություններ: Նիկիայում նրան ցույց են տվել այն սենյակը, ուր «սատակեցաւ պեզծն Արիոս» (41), ՅժԸ (318) սուրբ հայրերի ժողովատեղին (42), աչնուհետև՝ այն կղզին, «որ պեղծն Վաղէս արկեալ զսուրբն Ներսէս ի ծովն» (43): Այդ քաղաքի մերձակայքում նա տեսել է «մեծ լիճ մի, ուր Վրթանէս հայրապետն, Լուսաւորչի որդին, ահօսս վարեաց եղամբք, որ մինչև ցայսօր երևին ի վերայ ջրին տեղիք ահօսացն, որպէս յերկինս պատուածք սահանաց, ուստի տեղեաց անձրև» (41): Մի խոսքով, տեսել է անհաշիվ պատմական-ավանդական վայրեր ու կոթողներ. Հովհաննես Մկրտչի գլխատման (307), Վահան Գողթնացու նահատակության (311) տեղերը, այն եկեղեցին, ուր «սուրբ Լուսաւորիչն մեր և Ներսէս հայրապետն ձեռնադրեցաւ», Բարսեղ Կեսարացու (327), նրա եղբայր Գրիգոր Նիսացու (330) զերեզմանները և այլն:

Այս կարգի տեղեկություններ գրի առնելիս Միմեոն Լեհացին կուրորեն չի հետևում դրանց, այլ շատ հաճախ քննական վերաբերմունք է հանդես բերում, համադրում այլևայլ վկայություններ, որ հարուստ գիտանքների և լայն հետաքրքրասիրության վկայություն է. ընդհանրապես նա, թեպետ երիտասարդ, բավական զարգացած էր և բանիմաց. ճանապարհորդելիս իր հետ գրքեր էր տանում և ամենից շատ անհանգստանում էր դրանց համար: Հոռմի Սան-Ճուան եկեղեցու հարևանությամբ ցույց են տալիս Կոստանդիանոսի կառուցած մի այլ եկեղեցի և ասում, որ այդտեղ է պահվում սուրբ Կարապետի գլուխը: Մինչդեռ Միմեոնին ծանոթ են համանման այլ ավանդություններ, և

նա հայտնում է, թե ոմանց պնդմամբ գլուխը Մալթայում է, իսկ հայկական ավանդությունները՝ Գանձասարի վանքում (114): Այսպիսի դեպքերում նա համեմատում է տեսածն ու լսածը գրականությունից քաղած գիտելիքների հետ: Սրանք հանգամանքներ են, որ ոչ միայն ընդլայնում են ընթերցողի պատկերացումները, այլև գումարվելով, ինչպես ն. Ակինյանը կասեր՝ հեղինակի բարեմտությունը (լէ), առավել վստահելի են դարձնում մատենագրի խոսքը:

Մյուս կողմից, ուղեգրի՝ ջերմեռանդ հավատացյալ լինելը, մանկությունից փայփայած՝ սուրբ վայրերը տեսնելու իրականացած իղձը, հավատը տեսիլներին ու հրաշքներին՝ մեծապես նպաստում են ճանապարհորդության ընթացքի զգայական ընկալումներին և, անշուշտ, ինչ-որ հետք թողնում են նաև ընթերցողի հոգում:

Մատենագրության ավանդական ուղղության հետևորդ է Սիմեոնը, և հասկանալի է, որ նրա պատմահայեցությունը բնորոշ է կրոնական ոգին: Նրա պատումը ներշնչված է կրոնական ըմբռնմամբ, ուստի զարմանալի չէ, որ հայությունը կամ ընդհանրապես քրիստոնյաներին հասած աղետների մասին պատմելով՝ խոսքը սովորաբար ավարտում է փսոտարություններ: Բնութագրական են Անի մայրաքաղաքին վերաբերող նրա դիտողությունները: Նիկուկանի մեջ կարծես հեզնական շեշտով է ակնարկում լվովցիների՝ անհական ծագմամբ հպարտանալը:

**Քանի բանիկ մի ալլ ասեմ
Վասրն Հայոցն, որ ի Լովն են.
Ջի հպարտ և անձնախան են,
Ջի բնական Ամեցիք են:**

Կարծում ենք այս առումով ավելի հետաքրքրական է Սիմեոնի անդրադարձը Ուղեգրության մեջ (346—347): Լվովի հայերը, ասում է նա, Անիից եկած են, և ըստ պատմագիրների՝ նախապես հանդրվանել են ու բնակվել Կաֆայում ու Աքքերմանում. «Եւ այս չէ նախատինք, եթէ Անեցիք են», — նկատում է նա և բացատրում՝ ինչու: Որովհետև քաղաքը և այնտեղ մնացածներին աստված անիծեց, իսկ դուրս ելածներին (փրկվածներին) օրհնեց, ինչպես Ղովտին ու յուրայիններին. «Նոյնպէս զԱնի շար բնակչօք կործանեաց և զբարիսն եհան ի նմանէ. որպէս զՆոյ ապրեցոյց և զաշխարհն ամենայն կորոյս»: Ֆռանկաց ազգի (Իտալիայի ժողովրդի) բարօրությունը, դատում էր Սիմեոնը, միանգամայն սպասելի էր, որովհետև նրանք բարեպաշտ են, «աղօթքի ու ժամի ժիր ու հաստատ են», ավելի քան մահմեդականները (88): Զէ՞ որ մարգարեն ասել է՝ մեղքերը նվազեցնում են ազգերին, իսկ արդարությունը բազմացնում է որդոց որդիներին, իսկ Սերը ծածկում է մեղքերի բազմությունը: Հեղինակային խոսքից, սակայն, կարելի է ածանցել, որ եվրոպական երկրների քաղաքակիրթ ընթացքի և բարգավաճման ոչ պակաս կարևոր պատճառներից է այն մեծադույն բարեբախտությունը, որ նրանք հեռու են մնացել վայրենի-վաշկատուն ցեղերից: Իզուր չէ, որ այնտեղ չգիտեն, թե ինչ բան է կարավանը. ճանապարհներն անվտանգ են, ով ուր ուզենա գնալ՝ համարձակ գնում է միայնակ, և թե ոսկե թագ դնես գլխիդ՝ դարձյալ չես վտանգվի:

Այս հանգամանքները Ուղեգրությունը դարձնում են հետաքրքրական և գումարվելով երկի գեղարվեստական բաղադրիչներին՝ գիրքը դարձնում են ընթերցելի, շնայած գիտական սթափ վերաբերմունքը ևս պատշաճ տեղ ունի հեղինակի ոճի մեջ: Եվ այս երկու «անհամատեղելի» սկզբունքների զուգորդումը միևնույն նկարագրության մեջ հազվագյուտ չէ: Բրավատիում «ոմանք ի քաղաքացոցն ասին մեզ, թէ յառաջն ծով էր այս վայրքս. և հաւանելի էր

բանք նոցա լսողաց, զի և տեղիքն զայն յայտ առնէին» (6): Այսպիսի դիտողութիւնները կողքին հանդիպում ենք երբեմն զավեշտի հարող տպավորիչ դիտարկումների, որոնք նույն նպատակին են ծառայում, օգնում են հասկանալու տեղանքի «Ֆիզիքաաշխարհագրական» յուրօրինակութիւնը կամ ներկայացվող ժողովրդի կենցաղն ու բարքերը: Վերջին քաղվածքի շարունակութեան մէջ խոսվում է «ոլոր և ծուռ» մի անանուն գետի մասին, որ Սիմեոնն ու իր ուղեկիցները «մին օրն... քսան և վեց անգամ» են անցել (7): Մի այլ անգամ նրանք տեսել են «մեծ դետ մի շառաշմամբ՝ ծուռ ու մուռ, որ մէկ օրն վաթսուն անգամ զնա ձիովք անցար և ջորիովք» (46):

Առհասարակ կեհացու գծած բնապատկերները տպավորիչ են ու հիշվող. ահա Դանուբը, «սրընթաց ահագնատեսիլ, մեծ և ծովանման գետն թունայ, սոսկալի և բազմաց զարհուրելի, լայնատարած և անդնդային, մարդակուլ և արեհարբու» (6): Կոզալ-հիսարում կլոր տարին ամառ է, այնպես որ «անասունք և շորքտանիք ի տարին երկու անգամ ծնանէին» (39): Այս երկրաշրջանում «այնպէս մեծ շոգ լինէր, որ ասէին թէ տարի մի մէջիթի վրայի արծիճն հալել էր ի սաստիկ ջերմութենէն» (անդ):

Ընթերցողի միտքը մշտապես գործուն ընկալման առիթ ունի, կեհացին անընդհատ հաղորդում է նորանոր գիտելիքներ, որոնք խորացնում և ամրացնում է նոր կապերով, դիմելով համաբանութիւնների և համեմատութիւնների՝ ոչ միայն տարածական, այլ և երբեմն պատմական-ժամանակային, հոգեբանական-զգայական ընկալումներով: Ընդ որում, այսպիսի «ընդմիջարկութիւնները» բնականորեն մերվում են հեղինակային պատումին, շվնասելով նրա հետևողականութեանը, տրամաբանութեան ընթացքին, և ընդհակառակն, նրա պատեսելով հնարավորին շփ լայն պատկերացում կազմելու վիթխարի մի տարածաշրջանի երկրների ու ժողովուրդների, հայութեան նկատմամբ նրանց դրսևորած վերաբերմունքի մասին: Այսպիսի փաստերը առիթ դարձնելով՝ հեղինակը խորհրդածում է, վերլուծում երևույթն ընդհանրապես, համակողմանիորեն: Միաժամանակ այս ամենը խոսում է Սիմեոն կեհացու լայն ծանոթութիւնների և իմացութեան մասին:

Ուղեգրի ուշադրութիւնը գրավել է նաև Վենետիկի ժամացույցի աշտարակը, համեմատել է համանման կառույցների հետ: Կեհացին մանրամասնորեն է նկարագրել այն, նկատելով, որ «դրսեւանց շինած էր որպէս բոլորակ մի, որպէս և այլ տեղաց սահաքսն» (60. ընդգծումներն այստեղ և հետագայում մերն են— Ա. Մ.): Ֆրանկների երկրում «աղջիկն շատ է և մարդն՝ սակաւ, վասն որոյ պիտոր շատ ճիհէլ տան, թէ չէ մարդ չի առնուր զկինն առանց դրամի. որպէս եւ ի կեհաց յերկիրն» (143—144): Այսպես և՛ «... ասին թէ՛ անտ՝ [Կերատայ] սաստիկ ձմեռ լինի որպէս յԱրդրումն» (185), Կահիրեն «էր մեծ քաղաք որպէս մեծն Հոռմ» (217), Եամը մեծ է «քան զԼստամպօլ», ջուրն առատ՝ «որպէս ի Պուրսայ», իսկ վաճառանոցը նման էր «էտրնու Ալիփաշին», բայց սոչա շէնքն աւելի էր և զարմանալի և աննման» (312), Հալեպի հայերը՝ «իմաստունք, փարթամք, գեղեցկատեսիլ, նման Զուղայեցոց և Ամթեցոց՝ անուանիք և մեծ վաճառականք, որ մարդ ամաշէր երեսին հայիլ» (319): Համեմատութեան համար հիշվում են ժողովուրդներ, սովորույթներ, տոնական ծեսեր, երկրներ, Տավրոսից մինչև «Մանքերմանու բէշէրանին»՝ քարանձավները, Բեալտոյի կամուրջը, Այա-Սոֆիան, Երուսաղեմը և այլն: Հաճախ այս համեմատութիւնները վերածվում են հակադրութեան՝ հեղինակին առիթ տալով արտահայտելու իր զգացումները, վրդովմունքն ու ցավը: Կոստանդնուպոլսում բազմաթիվ կամուրջներ կան, որոնցով անվճար երթեվելով են մարդիկ գրաստներով, բեռներով, «ի յամօթ և ի նախատինս սուտ քրիստոնէից, որ քանի մն փայտ դնեն ի տղմային տեղիս կամ փայտեայ

կամուրջ շինեն և յանցանելն բռնութեամբ առնուն ի ճանապարհորդաց երկու դրամ՝ վասն արապէին կամ ձիուն, ո՛հ, ո՛հ» (28):

Հոռմի պապի, կաթողիկ եկեղեցու, կաթողիկների մասին խոսելիս արդարամիտ ու սթափ է լուսավորչական Լեհացին: Այս տեսակետից հատկապես ուշագրավ է Ֆրանկների գովքը (110): Կաթողիկոսություն ընդունած հայերին, սակայն, նա չի կարող ներել, հիշում է աղքատմա (ուրացող) նախատական հորջորջմամբ, բայց չի կարող շրնդգծել, որ «Փափի աշխարհն բարի և անխոռով» է, արդար հասարակություն, ուր զենք ու շարություն չկա, «կաշառ շառնուն ի վերայ իրաւանց», չկա նենգություն, ճանապարհները՝ խաղաղ և անդորր, «որպէս ի ժամանակս Մօրկայ կայսերն» (84—87):

Ավելին, դրական շատ հատկանիշներ է տեսել Սիմեոնը նաև տաճիկների մեջ: Նրա համար այդ հատկանիշներից կարևորը աղոթասիրությունն է: Նրան ցանկալի է, որ յուր ազգակիցները ևս լինեն ջերմեռանդ ու աղոթասեր. «Ապա վա՛յ և եղուկ յոյլ և ծոյլ անձին իմ, որովհետև մեր մէջ կա, որ երկու, երեք տարով եկեղեցի շեն մտել, իսկ որոշ սպիտակահերներ «Հայր մեր» չգիտեն, այլևս շասենք «Յայսմաւուրք» կամ այլ բան և ոչ երեսներին խաչ են հանում» (88): Աստված, Լեհացու համոզմամբ, այս տարբերությունները նկատի առնելով, օրինակ, կաթողիկներին արժանացրել է բարիքների, իսկ մեզ պատժում է ծովացյալ մեղքերի համար: Համանման դիտողություն կա նաև 109, 111 և այլ էջերում:

Հայտնի է, որ միջնադարյան մատենագրությունների մեջ մեծ տարածում ունեին քրիստոնեական կաղապարային պատկերացումները, և դա անբնական չէ: Դրանցից թերևս ամենաբնորոշը ժողովրդի կյանքում մեղքերի դերի բացարձակացումն է: Հետևելով հազարամյա ավանդույթին՝ Սիմեոն Լեհացին առիթից առիթ վերացականորեն նշավակում է անբարեպաշտ, հանցավոր գործերը, որոնք պարզապես կոչված են բացատրելու հայերին բաժին ընկած դժբախտությունները, երբ չկա այլ, ավելի ակնհայտ բանական պատասխան, զնում է դյուրին ճանապարհով: Ցավով նշելով Լեհաստանի քաղաքներում հայերի նվազելը, ավելի ճիշտ՝ ուժանայր, մի շարք գյուղերի վերանալը, մատենագիրը խոստովանում է. «Թէ վասն է՞ր, ոչ գիտեմ. կարծեմ թէ վասն մեղաց կամ նզովից սուրբ հարց. դի ամէն ազգ աճեն և բազմանան, իսկ մեք ջնջիմք և նուազիմք. վա՛յ ինձ» (348):

Հասկանալի է, մանկությունից երազած ճամփաներն անցնելով՝ երիտասարդ մատենագիրը տհաճ զգացումներից ու մտահոգություններից ավելի ապրել է հոգեկան բերկրանք ու ալեկոծություն, ուրախության պահեր: Եթե բարձր տրամադրությունն առիթ է տալիս զվարճախոսելու, ապա տխրության ու թախծի արտահայտությունը հաճախ չափածո խոսք է լինում, որ հեղինակը հակված է ողբ անվանելու: Նա լավ ծանոթ է միջնադարյան տաղերգությանը, մասնավորաբար հայրեններին և կաֆաներին (հատկապես՝ Պղնձե քաղաքի պատմության), ավելին, օգտվում է դրանցից, նույնիսկ կատարում անմիջական մեջբերումներ (323):

Ընդհանրապես Սիմեոնը հոգով նրբազգաց է, քնարական խառնվածքի տեր: Նա ցավով է նկարագրում ստրկավաճառանոցը, ուր մարդկանց «ծախէին որպէս զձի և զչորի» (18): Տեսնելով «զայս ամենայն աղէտս ցաւագինս, զոր բնաւ չէի տեսել, ցաւաց գլուխ իմ, դողաց սիրտ իմ, խոռովեցաւ անձն իմ և ամենայն ոսկերք իմ սասանեցան. և ոչ իշխէի հարցանել կամ մերձենալ առ գերեալսն, թէպէտ զլեզուս նոցա գիտէի՝ վասն ահի տաճկաց: Վասն որոյ արտասոււաթոր աշօք և տխուր դիմօք հայեցեալ յերկինս յոզոց հանեալ ասեմ. Ո՛հ, ո՛հ և եղուկ տառապելոյս. լաւ էր թէ չէի ծնեալ կամ թէ չէի եկեալ աստ, քան թէ տեսի ես զայսպիսի աղիողորմ խեղճս աշօք իմովք» (19): Հատկան-

շական է, որ սա ավելի է ողբ և ավելի է բանաստեղծություն, քան նրա շափածո ողբերը, որոնք իր անձին են վերաբերում. անձնական վշտի արտահայտություններն անհամեմատ թույլ են ստացվել: Պակաս քնարական է ու զգացմունքային նաև քրոջ մահվան կապակցությամբ ասված ողբը (179), որին խանգարել է ինչ-որ նախօրինակի նմանակելու գուցեև շգիտակցված ձրգտումը: Մարդկային մեծ դժբախտությունը ցնցել է նրա հոգեկան աշխարհը, և արդյունքը իսկական բանաստեղծական զեղումն է: Այնուամենայնիվ, անհրաժեշտ է հարևանցի անդրադառնալ շափածո խոսքի նմուշներից մեկին, որ իր հորինման հանգամանքներով նույնական է խաչատուր Թոխաթցու շափածո ճամփորդական նոթերի գրության շարժառիթի հետ:

Տոանկաց երկրի (Իտալիայի) սահմանագլխին Լեհացուն և իր ուղեկիցներին նետել են մեկուսարան՝ լազարեթ (այսօրվա ասությունը՝ կարանտին), և սրտնեղելով՝ նա ողբ է գրել, անհամբեր, թե երբ են դուրս գալու.

Տէրն ազատէ ըզմեզ աստի,
Այս նազարէք դարիպ երկրի,
Ղաֆիլ անկաք մեք այս տեղի,
Փորձանք եկաւ խիստ մեր զխի:
... Այս նազարէքս դժոխոց նման,
Հալէ, մաշէ զոսկերս մարդկան,
Աստուած առնէ մեզի տարման՝
Մէկ մի էլենք սորա դրան: (Յ1)

Հոգեմաշ քառասուն օրը անհամբերությամբ է անցկացրել երիտասարդ ուխտավորը, այնուհետև փառավոր եկեղեցիների, հոյաշեն զանգակատների, սրբավայրերի այցելությունը լիովին փոխհատուցել և մոռանալ է տվել մեկուսարանի տառապանքները:

Ընդհանրապես Սիմեոն Լեհացուն բնորոշ է ղվարթությունը, հոգեկան արիությունը: Ավելի ծանր, անելանելի վիճակներում նա գտնում է ժպտալու հնար: Նրա գրչին հատուկ են՝ անողոք ծաղր ու հեգնանք, միշտ ելակետ ունենալով մարդկայնությունը, բարին, գեղեցիկը, կատարյալը: Հոռոմի, Վենետիկի, Երուսաղեմի եկեղեցիների շուրջն ու վեհությունը վայելած ճանապարհորդի վրա ի՞նչ տպավորություն կգործեր Կահիրեի դպտի եկեղեցու թողլը՝ ված վիճակը: Ընդ որում, քաղաքի 40.000 դպտիները շատ հարուստ են, «բայց եկեղեցիքն նոցա խաւարչտին տեղոջ են և մթին, հիւթալի մրոտ, մինչ զի երկայն սարդիք կախեալ կսւն փոխանակ կանթեղաց...» (217): Արար Ֆելլահները զարմացրել են նրան իրենց բարքով, և բավական հանգամանորեն ուղեգիրը ներկայացնում է նրանց կենցաղը, կարելի է ասել՝ երբեմն պատկերն ամբողջացնելու համար կարծես ընկնելով այսպես կոչված՝ նատուրալիստական մանրամասների մեջ: Բայց դրությունը «փրկվում է», երբ հեղինակը զավեշտ է խառնում իրապատում նկարագրությանը. այնքան կեղտոտ են նրանք, որ «ոտվնուն վրայ կլայ բանջար ցանել» (219):

Ակնհայտ է Լեհացու գրական վարպետությունը, բազմազան է նրա ներկայանակը: Նա ստեղծում է կենցաղային հիշվող տեսարաններ, կերտում մարդկային հոգեբանություն, ներկայացվող վայրի գունաշխարհը: Նա համակրանքով է խոսում կեսարացիների մասին, որ՝ «քաղցրազրոյց և անուշախօսք, մարդավարք, խորագէտք և բանաստեղծք և առակախօսք, կատակարարք և ուրախացուցիչք. ապա ներկողք են» (329): Ն. Ակինյանը տողատակի ծանոթագրությամբ պարզաբանում է, որ խոսքը վերաբերում է էջ ներկելուն: Հրատարակչի ծանոթագրության իրավացիությունը հավաստվում է 228 էջի մի դիտողությամբ, երբ Լեհացին խոսում է ավանակ վաճառելու ավելի խարդախ և շահաբեր հնարքի մասին: Իբրև նորավեպ է ընկալվում Աթ-պազարի նկա-

րագիրը, ուր վաճառում են ուղտ, ազնիվ ձիեր, «բայց էջք նոցա ուսուցած է, զի արագ են ի փոյթ քան զձի. երբ նստի արապն ի վերայ և զձայնն լսէ՝ թռչի»: Սիմեոնի ուխտակիցները հիացած՝ թանկ գնով ավանակ են ձեռք բերել: «Իսկ ես ոչ սիրէի զէջն. և ոչ զգարշելի ձայնն լսել կամէի», — ասում է նա, և ձի է գնում՝ ավելի էժան: Եվ երբ ճանապարհ են ընկնում, «այն արագ իշվան հազիւ շարժէին, քահալ և ծոյլ եղեն. և որչափ աղաղակէին [տերերը], առաւել մնային»՝ հարուցելով զարմանք: Եվ պարզվում է, որ արաբները «բազում հիլա» ունեն, զանազան խթանիչներ են ստեղծում, որոնք գործում են որոշ ժամանակ, մինչև վաճառելը: Դադտնիքը գիտենալով միայն հնարավոր էր օգտվել նրանց «արագաշարժութունից» (227—228): Կամ, դիցուք, Եգիպտոսին վերաբերող հետևյալ նոթերը. «Որպէս առ մեզ համբաւեն թէ Ֆլան մարդ հազար ղուռուշ ունի, Ֆլան՝ երկու հազար. և նոքա խուրմայով պարծին, թէ ան արապն հարիւր արմաւենի ծառ ունի և միւսն երկու հարիւր և կամ երեք հարիւր», որովհետև դրա ամեն ինչն օգտագործվում է, ոչինչ չի կորչում. «Զպտուղն ծախեն, զկորիզն ալրեն, եղն հանեն, եաբրախէն սէբէթ հիւսեն, զկեղևն ծծեն զի մազմզուկ է, և անտի պարան օլորեն՝ բարակ և հաստ. իսկ փայտն ի շինուածս տան՝ ի պէտք և ի շահ է, և ինքն է կանաչ և անթառամ և բարձր, զոր և Դաւիթ հիանայր և փափագմամբ զարդարան արմաւենեաց նմանեցուցանէր՝ ասելով. «Արդարքն որպէս զարմաւենիս ծաղկեցին» (233, հմտ. Սաղմոս ՂԱ, 13):

Պակաս հետաքրքրական չէ և կաթնավաճառի մանրավեպը. մի արաբ, որ «ընդ իւր» ուներ 50—60 այծ, կաթ էր վաճառում, կանչելով՝ «Լապան, լապան», և ցանկացողին տեղնուտեղը կթում տալիս էր: Իսկ եթե գնորդը չէր հավանում ապրանքը, արաբը «բանայր զբերանս նոցա և դարձյալ լնոյր զկաթըն» (224):

Զվարճալի, ինքնին հետաքրքրական դիպվածներն ու պատմութունները հեղինակի սուր դիտողականութեան վկայութիւն լինելով՝ գեղարվեստական արժեք են տալիս Ուղեգրութեանը, ընդմիջելով ճանապարհորդութեան ընթացքի ու հանդիպած հուշարձանների, երկրների ու նրանց ազգաբնակչութեան, կենդանական և բուսական աշխարհի, կլիմայի, ժողովուրդների փոխհարաբերութիւնների, բարքերի, հոգեբանական ու բարոյական դիտարկումների ու բնութագրումների շատ անգամ լուրջ, երբեմն ողբերգական հյուսվածքը: Այս ամենի հետ կհասցին մեծ նշանակութիւն է տվել իր խոսքի հավաստիութեանը, հնարավորութեան դեպքում կատարելով հղումներ, ակնարկութիւններ: Տրվյալ երևույթի մասին ավելի ստույգ պատկերացում ստեղծելու համար նա օգտագործում է համապատասխան ասույթներ, առածներ ու ասացվածքներ, սովորական ձևով կապելով իր խոսքին՝ «որպէս ասի յառակաց»:

«Ուղեգրութեան» հաջողութեանը մեծապես նպաստել են չափի զգացումն ու առավելագույն ինքնահսկումը: Բազմաթիվ համանման փաստերի միջև հեղինակն ընտրութիւն է կատարում, այդ հարցում ևս հանդես բերելով նրբանկատութիւն և ուշադրութիւն՝ չձանձրացնելու ընթերցողին: Նա հաճախակի է դիմում ընթերցողին, խնդրելով ըմբռնումով մոտենալ՝ եթե պատմի ինչոր բան, որ «յոյժ հիացումն տայ լսողաց» (66): Վենետիկում նա տեսել է «շինուածս զարմանալիս և անտեսս», որոնց մասին «ոչ կարեմ գրել զամենայն մի ըստ միոջէ և ծանուցանել ձեզ, սիրելի եղբարք իմ, զի բազմութիւն խօսից ձանձրացուցանեն զընթերցողս և բուն ածեն ունկնդրողացն» (69): Նույն այս նպատակին ծառայող խոսքի ևս մեկ-երկու կառույց հիշենք վերջացնելուց առաջ. «Զորս ի բազմաց սակաւ մի կամիմ պատմել» (340) և «Թողով զայլս ի բաց, կկեսցուք ի պատմութիւնս առաջարկեալ բանիս» (102. նման վերաբերմունքի արտահայտութիւններ տես նաև 109, 130 և այլ էջերում):

Ղպտինների մասին տեղեկություններ հաղորդելիս Լեհացին չի խորանում մանրամասնությունց մեջ. եթե մատենագրության մեջ արձանագրված է՝ կրկնելն անհիմառ է. «Թէ զպատճառն այսմ կամիս իմանալ, ընթերցիր զպատմագիրս, զոր ոչ է պարտ երկրորդել» (218),— շատ անգամ խոսքը շերկարացնելու համար հղում է պատմագիրներին ու այլ գրքերի: Որևէ ուշագրավ երևույթ երկար-բարակ նկարագրելու փոխարեն Սիմեոնը նախընտրում է գնահատել կամ ընդգծել նրա տպավորիչ ուժը և մատենագրության համար սովորական՝ «անդ էր տեսանել» և համանման այլ կաղապարների կողքին օգտագործում է իրենը, որ հարազատ է ժողովրդական կենսազգացողությանը. «աչք հազար պիտի...» (9, 17, 25 կն), «ո՛րպէս գովեցից» (12), «չի գիտէ մարդ գո՛րն գովէ և... յո՛րն հայի» (18) և այլն:

Սիմեոն Լեհացին ներկայանում է ընթերցողին հարուստ ներաշխարհով, հայ մատենագրության, քրիստոնեական ավանդների ու պատմության հիմնավոր իմացությամբ: Նա ընթերցողին հաղորդակից է դարձնում իր ապրումներին, նույնիսկ կենսագրության շատ փաստերի, որոնք բնականորեն ներհյուսել է Ուղեգրությանը, առավել հարստացնելով այն: Նրա ներկայանակը բազմազան է. ստեղծել է բնապատկերներ, կենցաղային անմոռաց տեսարաններ, կերտել մարդկային կենդանի բնավորություններ: Այս ամենը նրա Ուղեգրությունը դարձնում են հետաքրքրական և գումարվելով երկի գեղարվեստական մյուս բաղադրիչներին՝ պայմանավորում են այդ ստեղծագործության առանձնակի արժեքը:

А. Г. МАДОЯН— «Путевые заметки» Симеона Лехаци как литературный памятник.— В ряду аналогичных произведений «Путевые заметки» Лехаци отличаются не только объемом, но и разнообразием и богатством содержащихся в них сведений. Во всякий удобный момент Лехаци записывал свои непосредственные впечатления от увиденного и пережитого в путешествии, «тогда как другие пили, ели и по-разному развлекались». В каждой местности он с пытливым ученого выясняет наличие армян, уклад и условия их материальной и культурной жизни, взаимоотношения с другими народами, отмечает местонахождение и характер христианских историко-архитектурных памятников, приводит данные о прошлом и настоящем края, его природные и климатические особенности—все это позволяет составить цельное представление о стране и ее жителях. Оценки и характеристики быта и нравов других народов, даже иноверцев, беспристрастны, результат собственных метких наблюдений и впечатлений. Автор раскрывается перед читателем как человек широкого кругозора, богатого духовного мира. знаток армянской книжности, ее христианских традиций. Это армянский книжник, христианин, григорианец. Автор приобретает читателя к своим переживаниям, к многим фактам своей биографии, умело вплетая этот материал в канву изложения. Лехаци рисует пейзажи, запоминающиеся бытовые сцены, живые человеческие образы, соблюдая чувство меры. Все это делает «Путевые заметки» Лехаци увлекательными для чтения и составляет их познавательную и художественную ценность.